Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 8 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆԸ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 90000 շահառուի հումանիտար աջակցության ցուցաբերում՝ առաջնային և երկարաժամկետ ինտեգրման կարիքները հոգալու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,724,012,240 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 90000 շահառու: Ծրագրի թիրախ խումբը վերջնական ձևավորվելու է պատկան լիազոր մարմինների և տեղական իշխանությունների աշխատակազմերի հետ համագործակցության արդյունքում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2023 թվականի դեկտեմբեր 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) կանխիկ դրամական աջակցության տրամադրում 5-ամսյա ժամանակահատվածում կոմունալ ծառայությունների և տան վարձավճարների վճարման նպատակով (միանալով կառավարության սխեմային)՝ 533,412,953 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում.<br>2) կանխիկ դրամական աջակցության տրամադրում՝ 381,620,827 դրամ, բազմանպատակ կանխիկի տրամադրման նպատակով (միանալով կառավարության սխեմային), նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում.<br>3) հիգիենիկ պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 23,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում.<br>4) սննդային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 30,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում.<br>5) արկղերի ձեռքբերում՝ 3,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում.<br>6) անկողնային և կենցաղային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 216,476,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>7) առաջին օգնության արկղերի ձեռքբերում՝ 4,855,760 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում.<br>8) մասնագիտական գործիքների և սարքավորումների ձեռքբերում շահառուների նախաձեռնություններին աջակցելու նպատակով՝ 24,150,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. |

| | | |
|---|---|---|
| | | 9) խնամքի միջոցների և հանրային սննդի ծառայությունների ձեռքբերում տարեց շահառուների խնամքի իրականացման նպատակով՝ 64,710,500 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>10) թարգմանչական և տպագրական ծառայությունների ձեռքբերում շահառուների իրազեկման նպատակով (կրթական նյութեր, հոգեբանական և առաջին օգնության թեմաներով նյութեր)՝ 24,173,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>11) վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում և շինարարական նյութերի ձեռքբերում հյուրընկալ համայնքների կրթական հաստատություններում և կոլեկտիվ կացարաններում թվով 27 երեխայակենտրոն կրթական կենտրոնների ստեղծման նպատակով՝ 96,600,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>12) շինարարական նյութերի, գործիքների և սարքավորումների ձեռքբերում Հայկական Կարմիր խաչի ընկերության պահեստների արդիականացման նպատակով՝ 17,020,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>13) գրենական պարագաների և կրթական նյութերի ձեռքբերում թվով 27 երեխայակենտրոն կրթական կենտրոնների գործառնության ապահովման նպատակով՝ 4,600,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>14) տրանսպորտային ծառայությունների և վառելիքի ձեռքբերում բաշխումն իրականացնելու համար՝ 16,468,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում. |

| | | |
|---|---|---|
| | | 15) շինարարական նյութերի ձեռքբերում և վերանորոգման աշխատանքների իրականացում պահեստային կարողությունների և Հայկական Կարմիր խաչի ընկերության 4 մարզային մասնաճյուղերի արձագանք իրականացնելու կարողությունների զարգացման նպատակով՝ 73,600,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>16) անձնակազմի, կամավոր անդամների, գործընկեր կազմակերպությունների և շահառուների կարողությունների զարգացման նպատակով դասընթացների, սեմինարների և հանրային միջոցառումների կազմակերպում՝ 42,757,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>17) կամավորների ճանապարհածախսի փոխհատուցում՝ 3,588,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում.<br>18) համակարգչային, հաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումների, փրկարարական գույքի և համազգեստի ձեռքբերում անձնակազմի և կամավոր անդամների համար հումանիտար աջակցության տրամադրման և բաշխումների ընթացքում դաշտային աշխատանքների արդյունավետ իրականացման և կոորդինացման համար՝ 113,850,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>19) աշխատավարձ ծրագրի անձնակազմի, դասընթացավարների և փորձագետների համար՝ 50,130,200 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) հիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ 23,000,000 դրամ արժողությամբ.<br>2) անկողնային և կենցաղային պարագաների ձեռքբերում՝ 216,476,000 դրամ արժողությամբ.<br>3) սննդային պարագաների ձեռքբերում՝ 30,000,000 դրամ արժողությամբ.<br>4) արկղերի ձեռքբերում՝ 3,000,000 դրամ արժողությամբ.<br>5) առաջին օգնության արկղերի ձեռքբերում՝ 4,855,760 դրամ արժողությամբ.<br>6) մասնագիտական գործիքների և սարքավորումների ձեռքբերում շահառուների նախաձեռնություններին աջակցելու նպատակով՝ 24,150,000 դրամ արժողությամբ.<br>7) խնամքի միջոցների և հանրային սննդի ծառայությունների ձեռքբերում տարեց շահառուների խնամքի իրականացման նպատակով՝ 64,710,500 դրամ արժողությամբ.<br>8) տրանսպորտային ծառայությունների և վառելիքի ձեռքբերում բաշխումն իրականացնելու համար՝ 16,468,000 դրամ արժողությամբ.<br>9) թարգմանչական և տպագրական ծառայությունների ձեռքբերում շահառուների իրազեկման նպատակով (կրթական նյութեր, հոգեբանական և առաջին օգնության թեմաներով նյութեր)՝ 24,173,000 դրամ արժողությամբ.<br>10) շինարարական նյութերի, գործիքների և սարքավորումների ձեռքբերում Հայկական Կարմիր խաչի ընկերության պահեստների արդիականացման նպատակով՝ 17,020,000 դրամ արժողությամբ.<br>11) վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում և շինարարական նյութերի ձեռքբերում հյուրընկալ համայնքների կրթական հաստատություններում և կոլեկտիվ կացարաններում թվով 27 երեխայակենտրոն կրթական կենտրոնների ստեղծման նպատակով՝ 96,600,000 դրամ արժողությամբ.<br>12) գրենական պարագաների և կրթական նյութերի ձեռքբերում թվով 27 երեխայակենտրոն կրթական կենտրոնների գործառնության ապահովման նպատակով՝ 4,600,000 դրամ արժողությամբ.<br>13) շինարարական նյութերի ձեռքբերում և վերանորոգման աշխատանքների իրականացում պահեստային կարողությունների և Հայկական Կարմիր խաչի ընկերության 4 մարզային |

| | | |
|---|---|---|
| | | մասնաճյուղերի արձագանք իրականացնելու կարողությունների զարգացման նպատակով՝ 73,600,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում.<br>14) համակարգչային, հաղորդակցության, ՏՏ սարքավորումների, փրկարարական գույքի և համազգեստի ձեռքբերում անձնակազմի և կամավոր անդամների համար հումանիտար աջակցության տրամադրման և բաշխումների ընթացքում դաշտային աշխատանքների արդյունավետ իրականացման և կոորդինացման համար՝ 113,850,000 դրամ արժողությամբ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր՝ 140,750,200 դրամ արժողությամբ, որը ներառում է աշխատավարձ ծրագրի անձնակազմի, դասընթացավարների և փորձագետների համար՝ 50,130,200 դրամ, շինարարական նյութերի, գործիքների և սարքավորումների ձեռքբերում Հայկական Կարմիր խաչի ընկերության պահեստների արդիականացման նպատակով՝ 17,020,000 դրամ և շինարարական նյութերի ձեռքբերում և վերանորոգման աշխատանքների իրականացում պահեստային կարողությունների և Հայկական Կարմիր խաչի ընկերության 4 մարզային մասնաճյուղերի արձագանք իրականացնելու կարողությունների զարգացման նպատակով՝ 73,600,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմերի հետ սերտ համագործակցությամբ: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը համագործակցում է նաև Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ավարտական հաշվետվություններ են ներկայացվելու Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիային: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեն իրականացնելու է գործունեության անմիջական վերահսկումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու |

| | | |
|---|---|---|
| | | կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ